

Աշխարհագրություն

УДК 631.164.25

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԳՈՏԻՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԼԱՆՁԵՐԻ ԵՎ ԼԵՌՆԱՀՈՎԻՏՆԵՐԻ
ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Վ. Գ. ՄԱՆԱՍՅԱՆ*

ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոն, Հայաստան

Հոդվածում քննարկվում է այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորմանը նպաստող սկզբունքները և գործոնները, լեռնային պտղաբուծության և խաղողագործության զարգացման հնարավորությունները ՀՀ գյուղատնտեսական գոտիներում: Հիմնավորվում են լանջերի, լեռնահովիտների վրա այգեգործության ռացիոնալ տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման սոցիալ-տնտեսական և ագրոէկոլոգիական խնդիրները:

Keywords: specialized zones, maintain slopes and valleys, terraces, curves.

Այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման համար լանջերի և լեռնահովիտների ռացիոնալ օգտագործումը՝ ՀՀ լեռնային տարածքում էկոլոգիապես մաքուր և բարձրորակ պտուղների, հատապտուղների և խաղողի արտադրության ընդլայնման կարևոր ռեզերվներից մեկն է: Լանջերի և կոպիճային հողերի վրա այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման հիմնական և առավել հեռանկարային գյուղատնտեսական գոտիներն են Նախալեռնայինը, Հյուսիսարևելյանը, Վայքը և Չանգեգուրն: Այստեղ առավել բարենպաստ ագրոէկոլոգիական պայմաններ են ձևավորվում հնդավոր, կորիզավոր պտուղների և խաղողի աճեցման համար, ստացվում են նաև հայրենական, արտասահմանյան շրջանացված և ընտրասերված ուրիշ լավագույն տորտեր: Հատապտուղների աճեցումը հեռանկարային է Նախալեռնային և Չանգեգուրի գյուղատնտեսական գոտիներում, որտեղ գտնվում են այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման համար առավել ընդարձակ հողատարածքներ: Առկա մեծաքանակ հարավահայաց լանջերի և լեռնահովիտների հողերը (նաև կոպիճային) համապատասխան հողաբարելավման դեպքում կարելի է օգտագործել պտղատու և խաղողի այգիների, հատապտղանոցների տեղաբաշխման համար: Ըստ եղած տվյալների, դրանք կազմում են շուրջ 100 հազ. հա [1]: Նշված միջոցառումների իրագործումը թելադրվում է բազմամյա տնկարկների տարածքի պակասուրդով և ներմուծումը տեղական արտադրանքով փոխարինելու անհրաժեշտությամբ, ինչն էլ իր հերթին նպաստելու է հանրապետության պարենային անվտանգության ապահովմանը:

Այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման համար լանջային և կոպիճային հողերի յուրացման գործնական հարցերի լուծման կարևոր նախադրյալը՝ հանրապետության լեռնային գոտու գյուղական տարածքներում գործազուրկ կամ ոչ լրիվ չափով զբաղված մարդկային ռեսուրսի առկայությունն է, նրանց հմտությունները և տնտեսավարման ազգային ավանդույթները:

* E-mail: manasyanvolodya@mail.ru

Ուսումնասիրվող գյուղատնտեսական գոտիներում լանջերի վրա պտղատու և խաղողի այգիները, հատապտղանոցները զբաղեցնում են ամբողջ տնկարկների մոտ 25–30%-ը: Կանխատեսելի հեռանկարում այստեղ նախատեսվում է հիմնադրել 8–10 հազ. *հա* նոր այգիներ և հատապտղանոցներ, որոնց զգալի մասը տեղաբաշխվելու են լեռնային գոտու տարբեր կողմնադրության և թեքության լանջերի վրա: Հեռանկարային է նաև թփուտային հատապտղանոցների, հատկապես հայկական ազնվամորու աճեցնելը:

Ալպիական ազնվամորու աճեցման և մշակության բարձր արդյունավետությունը և եկամտաբերությունն ապահովելու լավագույն ագրոկլիմայական պայմաններն ունեն Ապարանի և Սիսիանի տարածաշրջանները:

Շուկայական տնտեսության պայմաններում հիմնական բնական գործոնների (ջերմության, խոնավության և հողերի բերրիության) առավել նպաստավոր գույակցման դեպքում նախապատվություն է տրվում այգեգործության առավել ինտենսիվ պտղատեսակներին և խաղողին, որոնք միավոր հողատարածքի հաշվով առավելագույն շահույթ են ապահովում: Վերջին երեք տարիներին Վայոց Ձորի մարզի Աղավնաձոր, Արենի համայնքների մասնագիտացված պտղաբուծական տնտեսություններում 1 *հա* պտղատու այգուց տարեկան միջին շահույթը կազմել է 3,9 մլն դրամ, շահութաբերության մակարդակը՝ 497%: Աղավնաձոր համայնքում 120 *հա* պտղատու այգիներից՝ 480,0 մլն դրամ, Ռիմո համայնքում՝ հողատարածքի միայն 10%-ը զբաղեցնող այգիներից շահույթը, ամբողջ համայնքի գծով կազմում է 60–65%-ը (բոլոր հաշվարկները, նաև աղյուսակներում, կատարվել են Վայոց Ձորի մարզի ԳԱՄԿ-ի անտիպ տվյալների խմբավորված վերլուծության հիման վրա): Այս համայնքներում պտղատու այգիների և հատապտղանոցների միջին բերքատվությունը աճել է 20–25%-ով (90–95 *գ/հա*), ինչը 1,5–1,7 անգամ ավել է, քան հանրապետության միջին բերքատվությունը: Այս գոտիներում լեռնալանջերի վրա մասնագիտացված այգիների տեղաբաշխումը իրականացվում է հետևյալ տեխնոլոգիայով. թեքավուն (մինչև 5°) և թեթև գառիվայր (5°-ից մինչև 10°) թեքությամբ լանջերի վրա դրանց տնկում են ուրվագծորեն ըստ տնկավորի կամ սովորական հերկելով, իսկ ավելի գառիթափ և սակավ հումուսային հողաշերտով լանջերին՝ դարավանդների վրա [2]:

Հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու այգիներում (տարեկան տեղումների քանակը 600 *մմ* և ավելի), Նախալեռնային գյուղատնտեսական գոտու ոռոգվող այգիներում և հատապտղանոցներում, Վայքի և Չանգեգուրի գյուղատնտեսական գոտիների տնկարկներում լայնորեն երաշխավորվում է ցանքածածկի վրա խոտաբույսերի բազմակի հնձմամբ ճիմապատումը (ճիմահումուսային համակարգը): Ծիմապատման դեպքում բացառվում է հողի էրոզիան, բարձրանում է նրա բերրիությունը, ցանկացած եղանակային պայմաններում տնկարկների խնամքի համար տեխնիկայի օգտագործման և պտուղների, հատապտուղների, խաղողի բարձր բերք ստանալու համար նախադրյալներ են ստեղծվում (աղյ.1):

Աղյուսակ 1

8–10 ° թեքությամբ լանջերն ճիմապատման տակ խնձորենու Գողթն դելիչես տեսակի բերքատվությունը Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի Աղավնաձոր գյուղական համայնքում, *գ/հա*-ով (այգին հիմնել են 2008 թ.)

Տարբերակը	2013	2014	2015	2016	Չորս տարվա ընթացքում
Պայմանական սև ցել (միջբնային շերտը 2,0–2,5 <i>մ</i> լայնությամբ ճիմապատված) ստուգիչներ	27,0	194,2	172,6	230,2	624,0
Շարքի միջով ճիմապատում (մերձբնային շերտի հողերը մշակում են թունաքիմիկատներով)	44,9	203,4	181,1	271,2	700,6
Թմբամեջերի ճիմապատում (մերձբնային շերտի հողերը մշակում են թունաքիմիկատներով)	39,3	210,0	196,4	280,2	725,9

Պարարտանյութերով և գոմաղբով սնուցումը կախված է տնկարկի հասակից, վիճակից և ագրոկլիմայական պայմաններից: Ռեխիեֆի, ագրոկլիմայական պայմանների առանձնահատկությունների հաշվառմամբ լուծվում են նաև լանջային և կոպի-ճային հողերի վրա այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման մյուս հարցերը: Այդ հողերի վրա այգեգործության մասնագիտացված գոտիների տեխնոլոգիան ապահովում է էրոզիայից հողի հուսալի պաշտպանությունը, նրա բերրիության բարձրացումը, տնկարկների խնամքի գծով սերիական թողարկվող տեխնիկայի օգտագործումը և պտուղների, հատապտուղների, խաղողի բարձր բերքի ստացումը:

Ագրոհոլդինգային տիպի խոշոր տնտեսությունների փորձը վկայում է, որ գոտիական տեխնոլոգիաների օգտագործմամբ լանջերի յուրացումը մասնագիտացված այգիների համար տնտեսապես արդյունավետ է: Այգիներ տնկելու և մինչև պտղաբերությունը դրանց խնամելու ծախսերը փոխհատուցվում են պտղաբերության առաջին 2–3 տարում: Նույնիսկ ամենաթանկ կառուցված դարավանդները փոխհատուցում են իրենց ծախսերը, քանի որ դրանք գրեթե բոլորն օգտագործվում են կոմբինացված ձևով: Բացի հիմնական մշակաբույսերից այստեղ աճեցվում է լրացուցիչ բերք՝ բանջարեղեն, խոտաբույսեր և այլն: Ագրոհոլդինգային տիպի նոր պտղաբուծական և խաղողագործական մասնագիտացած տնտեսություններում տնկարկները հիմնվում են գոտիական տեխնոլոգիաներով: Սակայն ՀՀ-ում դեռևս քիչ չեն ցածր բերքատվությամբ լանջային այգիներ և հատապտղանոցներ ունեցող գյուղական տնտեսությունները, օրինակ՝ Նախալեռնային և Վայքի գյուղատնտեսական գոտիների անջրդի լանջերին:

Այս համատեքստում գիտական հետազոտությունները անհրաժեշտ է կենտրոնացնել յուրաքանչյուր գյուղատնտեսական գոտու և ենթագոտու լանջերի նկատմամբ կիրառելի այգիների և հատապտղանոցների տեղաբաշխման տեխնոլոգիաների հետազոտման և կատարելագործման վրա: Այգեգործության մասնագիտացված գոտիներում այգիների համար լանջերի յուրացման կարևոր հարցերից մեկը՝ դարավանդում է: Գրականության մեջ առկա են դարավանդի հողահարթակի վրա մինչև 6 մ լայնությամբ երկու շարքով պտղատու ծառեր և խաղողի վազեր աճեցնելու մասին տվյալներ՝ դարավանդի ակոսավոր և լցնովի մասերում դրանց տեղաբաշխմամբ [3]: Ելիին և Ռինդ համայնքներում դարավանդի հողահարթակի վրա 6 մ լայնությամբ խնձորենու երկու շարքով տեղաբաշխման գծով իրականացված ուսումնասիրությունները չհաստատեցին դրական արդյունքները: Դարավանդի հողահարթակի վրա երկշարքով ծառատունկերի տարբերակը պտուղների բերքատվությամբ չգերազանցեց դարավանդի հողահարթակի վրա 4,5–5,0 մ լայնությամբ մեկ շարքով խնձորենու տեղաբաշխման տարբերակին: Առաջին դեպքում թույլ լուսավորվածության հետ կապված ճյուղերի թանձրացման և թունաքիմիկատներով պտուղների մշակման պատճառով ապրանքային արտադրանքի որակը զգալիորեն ավելի ցածր է, քան երկրորդ տարբերակում: Այսպիսի ծառատունկերում, ինչպես առաջին տարբերակում, դժվարանում է տեխնիկայի օգտագործումը և ավելանում է ձեռքի աշխատանքի ծախսերը: Գոյություն ունեն դարավանդի հողահարթակի վրա 8 մ լայնությամբ և երկուսից ավելի ու բազմաշարք ծառատունկերի տեղաբաշխման հանձնարարականներ և փորձ: Այսպիսի տնկարկները, այդ թվում դարավանդի հողահարթակը մշակովի դարձնելը պահանջում են զգալի կապիտալ ներդրումներ, քանի որ դրանց համար հումուսային հող վերստին ներբերելով կամ էլ գոմաղբի բարձր քանակներ մտցնելով անհրաժեշտ է ստեղծել հողի բերրի շերտ: Նոր ստեղծվող ագրոհոլդինգային տիպի խոշոր տնտեսությունները չունեն այդ հնարավորությունները, իսկ գոյություն ունեցող գյուղացիական տնտեսությունները գոմաղբն օգտագործում են բանջարանոցային և գյուղատնտեսական ուրիշ մշակաբույսերի համար: Կանաչ պարարտացումը (սիդերացումը) ոչ միշտ է հաջողվում մերկացած փովածքի ապարներով դարավանդի հողահարթակի վրա:

Լայն դարավանդների վրա պտղատու և խաղողի այգիների բազմաշարք տնկումը կարող է արդարացվել միայն գաճաճ և կիսագաճաճ պատվաստակալների վրա դրանց թույլ աճեցողության դեպքում: Գիտական մշակումներն այդ ուղղությամբ

թույլ են տալիս լուծել պտտողների և խաղողի համար ամենաբարենպաստ գյուղատնտեսական գոտիներում և ենթագոտիներում դարավանդավորված լանջերի վրա այգեգործության մասնագիտացման կարևոր հարցերից մեկը: Այդ հարցը անհրաժեշտ է լուծել համալիր կերպով պտղատու այգիների աճեցման առաջավոր ազդոտելիսկանների մշակման հետ միաժամանակյա միավոր տարածքի վրա ծառերի խիտ զանգվածով տեղաբաշխմամբ:

Հետևաբար լանջի թեքության աստիճանից և կողմնադրությունից կախված փոխվում են ոչ միայն աճեցվող պտտողների, հատապտտողների և խաղողի սորտերը, այլև աճեցման եղանակները և դարավանդների ձևերը: Այսպես, օրինակ, եթե խնդիր է դրված տվյալ լանջում զարգացնել հատապտտողների մշակությունը, ապա դարավանդը պետք է կառուցվի ընդարձակ հողահարթակով: Մինչդեռ պտղաբուծության և խաղողագործության մասնագիտացման նպատակով կառուցվող դարավանդները կարող են լինել շատ նեղ մեկ շարք տնկարկների լայնքով: Արտադրության անհրաժեշտ տեխնոլոգիան կիրառելի է ոչ միայն կոնկրետ գյուղատնտեսական գոտու, այլև ենթագոտու և նույնիսկ կոնկրետ հողամասի նկատմամբ: Դրանք պետք է ապահովեն հողի պաշտպանությունն էրոզիայից, նպաստեն նրա բերրիության բարձրացմանը և մեքենաների առավելագույն օգտագործմանը: Ուսումնասիրվող գյուղատնտեսական գոտիների որոշ տեղամասերում, որտեղ տեղումների քանակա 500 մմ-ից քիչ է, արդյունավետ այգեգործությունը հնարավոր է միայն ոռոգման դեպքում: Ուստի պահանջվում է նաև պտղատու, խաղողի այգիների և հատապտղանոցների տեղաբաշխմանը համապատասխանող տեխնոլոգիա: Հատուկ ուշադրության է պահանջում ոռոգվող ջրի նվազագույն ծախսերով ռացիոնալ ջրարբիացումը, որի պահանջարկը գյուղատնտեսական ուրիշ մշակաբույսերի ոռոգման, զարգացող արդյունաբերության և կենցաղային կարիքների համար յուրաքանչյուր տարի աճում է: Ծովի մակարդակից տարբեր բարձրությունների վրա, ենթագոտիների և առանձին հողամասերի հողերի տիպերով և այլ գործոններով ձևավորվող ագրոկլիմայական պայմաններից կախված պտղատեսակների սորտերի և պատվաստակալների ընտրությունը գիտական հիմնավորում է պահանջում: Այսպես, Նախալեռնային գյուղատնտեսական գոտու կենտրոնական մասի առանձին տեղամասերում խնձորենու ձմեռային սորտերի բերքատվությունը առավել բարձր է հյուսիսային և սահմանակից կողմնադրության լանջերի վրա: Ամառային սորտերի բերքատվությունը բարձր է հարավային կողմնադրության լանջերի վերին տեղամասերում, որտեղ ձմեռային սորտերն անհրաժեշտ պայմաններ չունեն արդյունավետության ներուժային հնարավորությունների դրսևորման համար [3]:

900–1500 մ բարձրությունների վրա արգավանդ խոնավասպահովված հողերով թեք լեռնալանջերին աճեցման համար հեռանկարային կարող են լինել վեգետատիվ և սերմնատու պատվաստակալների վրա թույլ աճեցողության սորտերը, ինչպես նաև սպուրային տիպերը: Մակայն այդ սորտերը լեռնային տարածքի պայմաններում թույլ են ուսումնասիրված: Տարբերակված պետք է լինի նաև պատվաստակալների ընտրությունը: 12°-ից բարձր թեքությամբ լեռնալանջերի վրա, որոնցում հողերը, որպես կանոն, ողողամաշված են, նախապատվությունը տրվում է սերմնաբույսային արագ աճեցողության պատվաստակալներին: Լանջերի ցածրադիր տեղամասերը նպատակահարմար է օգտագործել միջին աճեցողության վեգետատիվ պատվաստակալների համար: Ավելի թույլ թեքության լանջերի վրա դրական արդյունք տալիս են նաև միջին աճեցողության վեգետատիվ պատվաստակալները: Եղեգնաձորի տարածաշրջանի Աղավնաձոր համայնքում մինչև 8–10°-ի թեքությամբ լանջերի վրա կիրառվող փորձով խնձորենու Գոլդեն դելիշես սորտի միջին բերքատվությունը պատվաստակալներից կախված կազմել է 195–230 *g/hu* (առյ. 1):

Ստարկրիմսոն խնձորենու տեսակը տնկելուց հետո 10 տարում Դուսեն-2 պատվաստակալի վրա 225 *g/hu* բերք է ապահովել: Իրենց լավ են դրսևորում նաև Մ7 և Մ9 դուսենների պատվաստակալները, Տրուսկիչի I-48-46 ընտրասերման պատվաստակալը: Մակայն ոչ խորը և սակավ հումուսային հողաշերտով ողողամաշված

լանջերի վրա Ռեդ դելիշես, Ստարկրիմսոն տեսակները, Գելիշես խնձորենու որոշ սորտերը տեղաբաշխված են զգալի թեքությունների վրա [4]: Ողողված հողերի վրա խնձորենին վեգետատիվ պատվաստակալների վրա թույլ է աճում, իսկ պտուղները մանրանում են դառնալով օգտագործման համար ոչ պիտանի:

Խնձորենու և տանձենու թույլ աճած սորտերի ոռոգման դեպքում աճեցման դրական փորձ է գրանցվել լեռնահովիտներում, այդ թվում սպուրայիններում թույլ և միջին աճեցողության պատվաստակալների վրա: Ելնելով լանջերի ագրոկլիմայական պայմաններից անհրաժեշտ է ընտրել հիմնական խաղողի և պտուղների լավագույն սորտապատվաստակալման զուգակցությունների փունջը:

Աղյուսակ 2

Վայոց Ձորի մարզի Աղավնաձոր համայնքում Գողեն դելիշես խնձորի բերքատվությունը կախված 10–12° թեքությամբ լանջի վրա տնկելու սխեմայից (այգին հիմնվել է 2004 թ., պատվաստակալ-սերմնաբուսային), ց/հա-ով

Տարբերակը, մ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	Միջինը 8 տարում	
									ց/հա	%-ով
8 × 5,0	4,2	17,2	65,3	107,3	168,5	84,5	213,8	245,3	116,8	100,0
8 × 3,7	6,7	22,0	91,4	93,2	176,8	101,7	226,4	279,0	124,9	107,0
8 × 2,5	7,0	29,5	67,8	105,0	179,0	41,2	114,0	206,0	94,0	80,5

Լեռնային այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման մեջ ուրույն նշանակություն ունի ծառատունկերի խտությունը, որը պետք է լինի օպտիմալը պտղատեսակների սորտերի, պատվաստակալների, շրջակա միջավայրի պայմանների, կտրուկի տեխնիկայով տնտեսությունների ապահովվածության, որակյալ աշխատուժի և ուրիշ գործոնների հաշվառմամբ:

Փորձով հաստատվել է, որ Վայքի գյուղատնտեսական գոտում սերմնաբույսային պատվաստակալների վրա շարքի մեջ խնձորենիների 2,5–4,0 մ խտացումը բերքատվության գծով մինչև չի տալիս առավելություններ համեմատած ստուգիչների հետ (միջշարքերի միևնույն լայնության դեպքում ծառերը շարքի մեջ տնկված են յուրաքանչյուր 5 մ-ից հետո (աղյ. 2)):

Ծառատունկերի լավագույն սխեմաները մշակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ 12°–13°-ից ավելի թեքությամբ բոլորովին նույնական լանջերի սահմաններում ծառերն ավելի լավ են աճում ցածրադիր և նկատելիորեն թույլ բարձրադիր տեղամասերում: Լեռնալանջի բարձրադիր տեղամասում խնձորենին նպատակահարմար է տնկել սերմնաբույսային պատվաստակալների վրա, իսկ ցածրադիրում՝ վեգետատիվների վրա: Դա թույլ է տալիս մեկ տեղամասի վրա ունենալ ծառատունկերի միասնական սխեմա: Մինչև 10°–12° թեքությամբ լեռնալանջերի վրա ծառատունկերի սխեմաների տարբերակման անհրաժեշտությունը վերանում է: Այսպիսի լեռնալանջերի վրա պտղատու և խաղողի այգիները տնկում են հորիզոնական հարթությունների տեղամասերում կիրառվող սխեմաներով: ՀՀ այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման մեջ ուրույն տեղ են զբաղեցնում առանձնահատուկ ենթագոտիական պայմաններով ծովի մակարդակից մինչև 1000–1200 մ բարձրությունների վրա տեղաբաշխված լեռնահովիտները: Հյուսիսարևելյան և Ջանգեզուրի այդպիսի գյուղատնտեսական ենթագոտիներում փորձով դրական արդյունքներ են ստացել զաճաճ պատվաստակալների վրա խնձորենիների և տանձենիների թույլ աճեցողության ուրույն սորտերի խիտ ծառատունկերից (5500 և ավելի ծառեր 1 հա-ի վրա): Այս գյուղատնտեսական գոտիներում՝ սերմնաբույսային պատվաստակալների վրա խնձորենիների խտացված տնկումները՝ բազմամյա տնկարկների արդյունավետության բարձրացման կարևոր գործոններից են: Լեռնային այգեգործության մասնագիտացված տարբեր գյուղատնտեսական գոտիներում

սկզբնավորված հետազոտությունները (տեսակների ընտրության, լավագույն սորտապատվաստակալման գուգակցումների գծով, պտղատու և խաղողի այգիների ծառատունկերի լավագույն սխեմաների մշակումը՝ կախված ենթագոտու պայմաններից և հողամասի թեքության աստիճանից) անհրաժեշտ է իրականացնել համալիր կերպով տնկարկների խնամքի գծով ագրոտեխնիկական հարցերի մշակման հետ:

Որևէ գյուղատնտեսական գոտում աճեցնելու համար սորտերից առավել արդյունավետ տեսականու ընտրությունը նպաստելու է նաև հիմնական և առավել հեռանկարային այգեգործության տեսակափորձման հողամասերի ցանցի ստեղծմանը: Անհրաժեշտ է հանքային և օրգանական պարարտանյութերի ռացիոնալ և համալիր օգտագործման, սաղարթամասերի ձևավորման, պտղատու ծառերը և խաղողի վազերը էտելու, լեռնահովիտներում և լանջերի վրա ոռոգման գիտական հիմնավորում և այգիների տակ յուրացման համար հողերի պիտանելիության ագրոէկոլոգիական գնահատական:

Այգեգործության մասնագիտացված գոտիների ձևավորման համար հողերի յուրացման և բարելավման, հին այգիները նորով փոխարինելու դեպքում կարևոր տեղ է զբաղեցնում նյութատեխնիկական բազան: Լեռնալանջերի յուրացումը, հատկապես բարձր թեքությունները, կոպիճային հողերն՝ ըստ ծավալի զգալի և թանկ գին ունեցող հողաբարելավման աշխատանքներ են պահանջում՝ թփուտների և մանրածառուտների արմատահանում, դարավանդավորում, նախագծում, բնահողը մշակովի դարձնել, հակաէրոզիոն կառույցների, ճանապարհային, ոռոգման ցանցերի շինարարություն և այլն: Այդ նպատակով անհրաժեշտ է ծանր հողաբարելավման տեխնիկա՝ բուլդոզերներ, գրեյդեր-դարավանդիչներ և, գործնականորեն բացակայող, հատուկ մեքենաներ պտղատու, խաղողի այգիների և հատապտղանոցների խնամքի համար: Այդպիսի աշխատանքներ կատարելու համար նպատակահարմար է ստեղծել մասնագիտացված գյուղատեխնիկայի հավաքակազմ:

Լանջային այգեգործության մեջ դեռևս մշակված չեն աշխատողների, մեխանիզատորների արտադրողականության և աշխատավարձի սահմանված չափերը, վառելիքա-քսայուղային նյութերի ծախսերի ու մաշվածքամարման հատկացումների չափաքանակները: Գոյություն չունի նաև այդ ցուցանիշների հաշվարկման մեթոդիկա: Մինչև այժմ գործում են ագրարային տնտեսավարման մեջ հորիզոնական հարթությունների այգիների և հատապտղանոցների համար մշակված չափաքանակները: Տարբերակված չեն լանջերի և լեռնահովիտների վրա աճեցված պտուղների, հատապտուղների և խաղողի իրացման գները: Գնային քաղաքականությունը հաշվի չի առնում լանջերի վրա աճեցված բերքի էկոլոգիապես մաքուր և բարձր որակը: Հօգուտ լեռնային գյուղատնտեսության անհրաժեշտ է բերքի մթերումը կազմակերպել աճեցման վայրում:

Լեռնային ռելիեֆի պայմաններում այգեգործության մասնագիտացման գոտիների ձևավորման առանձնահատկությունն ենթադրում է համապատասխան կադրերի պատրաստում և վերապատրաստում, նրանց ստաժավորումը հանրապետության և արտասահմանյան լավագույն գյուղատնտեսական ձեռնարկություններում: Հատուկ ուշադրություն դարձնելով թե՛ բարձր արտադրողականության, աշխատանքային հմտությունների և ունակությունների, թե՛ ագրոտեխնիկական գիտելիքների վրա [5]: Ագրոհոլդինգային տիպի խոշոր տնտեսությունների փորձը վկայում է, որ յուրաքանչյուր 50–60 հա այգու վրա կանոնավոր աշխատանքներ ապահովելու համար բարձրագույն գյուղատնտեսական կրթությամբ մասնագետ է պահանջվում:

Այսպիսով, միայն բարձրացված հարցերի համալիր լուծումը, կարող է թույլ տալ հանրապետության գյուղական և քաղաքային բնակչության հարաճուն պահանջմունքները այդ մթերքներով բավարարելու համար ավելացնել էկոլոգիապես մաքուր և բարձրորակ պտուղների, հատապտուղների և խաղողի արտադրությունը ՀՀ-ում:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **Погосян Д.А.** Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Арм. ССР. Ер.: Изд-во АН Арм. ССР, 1986, с. 16–27.
2. **Տեր-Չարարյան Պ.** Բազմամյա տնկարկների ոռոգումը լանջերում: Եր., Հայպետգյուղ. հրատ., 1961, էջ 18–19:
3. **Մկրտչյան Բ.С.** Агроклиматическая характеристика заморозков в горных условиях Арм. ССР. Л.: Гидрометеиздат, 1973, с. 133–136.
4. Հայկական ՄԱՀ խնձորենու շրջանցված և տարածված սորտերի համառոտագրություն: Եր., Հայկ. ՄԱՀ գյուղինիստություն, 1983, էջ 10; 12; 21:
5. **Аганбегян А.Г.** Сельское хозяйство – локомотив социально-экономического роста России. // ЭКО, 2017, № 5, с. 20–21.

В. Г. МАНАСЯН

РАЦИОНАЛЬНОЕ ИСПОЛЬЗОВАНИЕ СКЛОНОВ И ГОРНЫХ ДОЛИН РА
ДЛЯ ФОРМИРОВАНИЯ СПЕЦИАЛИЗИРОВАННЫХ ПОЯСОВ САДОВОДСТВА

Резюме

В статье рассмотрены принципы и факторы формирования специализированных поясов РА под промышленное садоводство, возможности производства в этих поясах плодово-ягодной продукции и формы специализации в подотрасли. Обоснованы предложения по рациональному размещению специализированного садоводства на склонах горных долин, а также параметры соответствующих сельхозорганизаций.

V. G. MANASYAN

RATIONAL APPLICATION OF SLOPES AND VALLEYS FOR THE
FORMATION OF SPECIALIZED ZONES OF GARDENING IN THE RA

Summary

Principles and factors promoting the formation of specialized zones of gardening, in the article are discussed in the article, as well as opportunities for fruit and grape raising in agricultural zones. Rational distribution of gardening on the slopes and valleys and its social-economic and ecological significance are grounded in the article.